

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1074-28.09.2016-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքներ և դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ ունեցող հարկ վճարողները, ովքեր, ըստ հաստատված հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի, կկատարեն

պարտավորությունները, կազատվեն հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից.

2) արտոնության կիրառման նպատակով հարկ վճարողները հարկային պարտավորությունների ժամանակացույց ստանալու համար մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը հարկային մարմին պետք է ներկայացնեն դիմում.

3) դիմումն ստանալուց հետո հարկային մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և հաստատում է հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց, որով հարկ վճարողը պարտավորվում է հարկային պարտավորությունները կատարել մինչև համապատասխան ժամկետը: Կախված պարտավորության գումարի չափից՝ առաջարկվում է սահմանել պարտավորությունների մարման համապատասխան ժամկետներ և ամսական չափեր (մինչև 70 մլն դրամի դեպքում՝ պարտավորության մեկ վեցերորդի չափով, մինչև 2017 թվականի հունիսի 30-ը, 70 մլն դրամից ավելիի դեպքում՝ մեկ տասերկուերորդի չափով, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը):

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ներկայացված խմբագրությամբ օրենքի նախագծով հստակ չի կանոնակարգվում հարկային արտոնությունների տրամադրման գործընթացը, օրենքի նախագծի հոդվածների միջև առկա են անհամապատասխանություններ, որի հետևանքով, օրենքի նախագծի ընդունման պարագայում արտոնությունների կիրառման առումով այն կարող է առաջացնել խնդրահարույց հարցեր: Մասնավորապես՝

1. 2-րդ հոդվածով սահմանվում են նոր հասկացություններ, որոնք տարբերվում են գործող հարկային օրենսդրությամբ նույն հասկացությունների համար տրված սահմանումներից: Մասնավորապես, օգտագործվում է «շահառու» հասկացությունը, և այդ հասկացության մեջ առանձնացվում են կազմակերպությունը, պետական կամ պետական մասնակցությամբ կազմակերպությունները.

2. 2-րդ հոդվածի համաձայն շահառու են հանդիսանում կազմակերպությունները: Այսինքն՝ օրենքի նախագծով առաջարկվող հարկային արտոնություններից կարող են օգտվել նաև ոչ առևտրային կազմակերպությունները, ինչը անհասկանալի է՝ հաշվի առնելով այն, որ, օրենքի նախագծի հիմնավորման համաձայն, օրենքի նախագծի նպատակը ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացումն է:

3. 2-րդ հոդվածի համաձայն շահառու համարվելու համար հիմք է ընդունվում շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ԱԱՀ-ի, շրջանառության հարկի, հաստատագրված վճարի, տարեկան պետական տուրքի մասով պարտավորություններ ունենալը: Այսինքն՝ օրենքի նախագծի համաձայն շահառու կարող են հանդիսանալ միայն նշված հարկատեսակների, հաստատագրված վճարի և պետական տուրքի մասով պարտավորություններ ունեցող հարկ վճարողները: Օրենքի նախագծով ներկայացված «հարկային պարտավորություն» հասկացության սահմանման համաձայն, սակայն, ստացվում է, որ հարկային պարտավորություն են համարվում ոչ միայն նշված հարկատեսակների և վճարատեսակի մասով պարտավորությունները, այլ առհասարակ բոլոր պարտադիր վճարների գծով պարտավորությունները (օրինակ՝ բնապահպանական կամ բնօգտագործման վճարը և այլն): Ստացվում է, որ շահառու համարվելու համար հիմք է ընդունվում առանձին հարկատեսակների գծով պարտավորություններ ունենալու հանգամանքը, իսկ որպես հարկային պարտավորություն, որի նկատմամբ նախատեսվում է կիրառել արտոնություն՝ ընդհանրապես հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքները և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները:

Անհասկանալի է նաև, թե ինչու են շահառու համարվելու համար հիմք ընդունվում միայն որոշ հարկատեսակների և, առանձնապես, տարեկան պետական տուրքի գծով ժամկետանց պարտավորությունները: Խնդիրը, հատկապես, այն է, որ տարեկան պետական տուրքի մասով առաջարկվող արտոնության կիրառության հետևանքով առաջանալու են մի

շարք խնդիրներ, որոնք օրենքի նախագծով կարգավորված չեն: Մասնավորապես, գործող օրենսդրության համաձայն, տարեկան պետական տուրքի գծով չկատարված պարտավորությունները հիմք են տնտեսվարող սուբյեկտներին տրված լիցենզիաների գործողությունը կասեցնելու համար: Օրենքի նախագծով, սակայն, չեն կարգավորվել առաջարկվող արտոնությունների կիրառությունից հետո կասեցված լիցենզիաների հետ կապված հարցերը:

4. օրենքի նախագծից պարզ չէ, արդյոք պարտավորությունների մասնակի մարումների դեպքում արտոնությունները կիրառվելու են այդ մարումներին համամասնորեն, թե՛ ոչ և, հետևաբար, պարզ չէ նաև ժամանակացույցի խախտումների դեպքում ինչ գումարների մասով են վերականգնվելու հարկային պարտավորությունները, օրինակ՝ տույժերը: Բացի դրանից՝ հարկ է նկատել, որ, օրենքի նախագծի 5-րդ հոդվածի համաձայն, ժամանակացույցի խախտման դեպքում հարկային մարմինն իրավասու է դիմելու դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով, մինչդեռ գործող օրենսդրության համաձայն, հարկային պարտավորությունների բռնագանձումն իրականացվում է արտադատարանական կարգով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված խմբագրությամբ օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

<<Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:  
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՎԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Եզրակացություն**

**«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

#### «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է՝ սահմանել հարկային պարտավորությունների վճարման կարգ՝ մինչև 70 միլիոն և 70 միլիոնից ավելի ՀՀ դրամ հարկային պարտավորություն ունեցող շահառուների (հարկ վճարողներ) համար:

Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են մի շարք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շուկաների հետ, սակայն Նախագծի ընդունմամբ նշված շուկաներում մրցակցային դաշտի վրա զգալի ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվում է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *զգալի ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

#### «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով, նախատեսվում է սահմանել մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ հարկային և (կամ) այլ պարտադիր վճարների գծով ապառքներ և դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ ունեցող տնտեսավարողների և հարկային մարմնի միջև այդ պարտավորությունների մարման ժամանակացույցի կնքման **պարտադիր** նորմեր:

Ներկայումս ՀՀ օրենսդրությունը սահմանում է հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի սահմանման հնարավորություն, սակայն այն կրում է հայեցողական բնույթ և հարկային մարմնին տրված է սուբյեկտիվ որոշումներ կայացնելու հնարավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական ազդեցություն**:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առանձին հարկատեսակների, պետական տուրքի գծով ապառքներ, տույժեր և տուգանքներ ունեցող հարկ վճարողները, ովքեր ըստ հաստատված հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի կկատարեն պարտավորությունները, կազատվեն հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:



Պ-1074-28.09.2016-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ  
ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի համար հարկային եւ այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2.** Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքի կիրառության իմաստով, ստորեւ նշված հասկացություններն ունեն հետեւյալ իմաստն ու նշանակությունը.

**շահառու՝** կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր, պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություններ, որոնք 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ եւ (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով ունեն շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, շրջանառության հարկի, հաստատագրված վճարի, տարեկան պետական տուրքի գծով ապառքներ եւ դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ.

**հարկային պարտավորություն՝** 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ եւ (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով հարկային եւ այլ պարտադիր վճարների գծով ապառքներ եւ դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ:

**Հոդված 3.** Շահառուների՝ հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց ստանալը, հաստատելը

1. Շահառուն հաշվառման վայրի հարկային մարմնից սույն օրենքի իմաստով հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց ստանում է իր դիմումի համաձայն, որը ներկայացվում է հաշվառման վայրի հարկային մարմին մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Հարկային մարմինը հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, դիմումատուի հետ կազմում եւ հաստատում է հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց, որով շահառուն պարտավորվում է վճարել հարկային պարտավորությունները սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգով:

**Հոդված 4.** Հարկային պարտավորությունների վճարման կարգը

1. Շահառուն պարտավորվում է վճարել հարկային պարտավորությունները հետեւյալ կարգով՝

1) մինչեւ 70 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ հարկային պարտավորություն ունեցող շահառուներն ըստ հաստատված հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի մարումները կատարում են 2017 թվականի հունվարի 1-ից սկսած մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային պարտավորության առնվազն մեկ վեցերորդ մասը.

2) 70 միլիոն եւ ավելի Հայաստանի Հանրապետության դրամ հարկային պարտավորություն ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները 2017 թվականի հունվարի 1-ից սկսած մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային պարտավորության առնվազն մեկ տասներկուերորդ մասը:

2. Շահառուները, որոնք հաստատված ժամանակացույցով փաստացի կմարեն ունեցած հարկային ապառքները, կազատվեն հարկային օրենսդրության համաձայն հաշվարկված տույժերից, տուգանքներից:

3. Շահառուները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին փաստացի կատարել են 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ եւ (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած հարկային եւ այլ պարտադիր վճարների գծով ապառքների վճարումները, սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են այդ ապառքների գծով հաշվարկված եւ չվճարված տույժերը եւ տուգանքները վճարելու պարտավորությունից:

**Հոդված 5.** Հարկային պարտավորությունների մարման հաստատված ժամանակացույցով վճարումների խախտման դեպքում հարկային մարմնի գործողությունները

1. Սույն օրենքի 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի առաջին իսկ խախտման դեպքում հարկային մարմնին իրավունք է վերապահում պարտավորությունների բռնագանձման հայց ներկայացնել դատարան:

2. Շահառուները, որոնց նկատմամբ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող եւ (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու համար ներկայացվել են բռնագանձման հայցեր, հարկային մարմնի հետ կնքում են հաշտության համաձայնություն:

**Հոդված 6.** Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունումը պայմանավորված է հարկ վճարողների՝ մեծ ծավալների հասնող կուտակված հարկային պարտավորություններով, որոնք ներկա պայմաններում կատարման ցածր հավանականություն ունեն:

Մյուս կողմից՝ օրինագծի ընդունումը թույլ կտա էականորեն նպաստել նաեւ 2017 թվականի բյուջեի եկամտային մասի կատարմանը, քանզի ինչպես ցույց է տվել նախկին հարկային համաներումների փորձը, հարկային պարտավորությունների համար հաշվեգրված տույժերից ու տուգանքներից ազատումը կշահագրգռի հարկ վճարողներին կատարելու տարիներ ի վեր չկատարված հարկային պարտավորությունները՝ այդ կերպ մեղմելով թե՛ սեփական հարկային

բեռը, թե՛ նպաստելով բյուջեի կատարմանը:

Սույն օրենքի նախագծի ընդունումը նաեւ էականորեն կբարձրացնի ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունն այն առումով, որ ներկա հետճգնաժամային փուլում հարկատուների մոտ գոյացած հարկային տույժ ու տուգանքները հաճախ անհեռանկար են դարձնում ձեռնարկատերերի հետագա գործունեությունը:

Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ օրինագծի ընդունումը առավել քան արդիական եւ հիմնավորված է հարկային օրենսգրքի ընդունման նախաշեմին, քանզի այն մի կողմից թույլ կտա փոխհատուցելու ՀՀ-ում մյուս երկրների համեմատ գործող տույժերի աննախադեպ խստությունը, մյուս կողմից հարկային օրենսգրքի ընդունումով պայմանավորված խաղի նոր կանոնների հաստատումից առաջ առողջացնու հարկային դաշտն ու գործարար միջավայրը՝ հնարավորություն ընձեռելով հարկ վճարողներին գործել թեթեւացած հարկային բեռով: